

ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ  
ՅՈՐԵՆԻ ՆԵՐԱՈՐՏԱՅԻՆ  
ԻԱԶԱՁԵՎՈՒՄԸ

Հ Բ Ա Հ Ա Ն Գ

ԱՐՄԱՆՅ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք.

Академия Наук СССР — Армянский Филиал  
Биологический Институт - Сект. Ген. растений

**КАК ПРОВОДИТЬ ВНУТРИСОРТОВОЕ  
СКРЕЩИВАНИЕ ПШЕНИЦЫ**  
**ИНСТРУКЦИЯ**

ИЗДАНИЕ АРМФАН-а  
ЕРЕВАН 1939

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ-ՀԱՑԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ  
ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ - ԲՈՒՅԱՏԵՐԻ ԳԵՆԵՏ. ՍԵԿՈՐ

633.11:631.52

F

Ի՞նքուս ԿԱՏԱՐԵԼ ՑՈՐԵՆԻ  
ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ԽԱԶԱՁԵՎՈՒՄԸ

ՀՐԱՀԱՆԳ

A 4695



ԱՐՄԵՆԻ ՀՐԱՀԱՆԳՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՐԵԿԱՆ 1939

Տպագրվաւմ է ԽՍՀՄ Գիտությաւնների Ակադեմիայի  
Հայկական Ֆիլիալի նախագահության կորոշմամբ.

Նախագահի տեղակալ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՆԵՐԱՊՐԾՈՑԻՆ ԽԱՉԱԶԵՎՈՒՄԸ ՅՈՒԹՍԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑ Ե

Խորհրդային խոշորագույն գիտնական  
ակադեմիկ Տրոֆիմ Դինիսովիչ Լիսենկոն  
1935 թվին առաջարկեց մի միջոց, վորոն զգա-  
լի չափով բարձրացնում և մի շարք բույ-  
սերի բերքատվության հատկությունը. այդ  
միջոցը ներսորտային խաչաձևումն եւ:

Բույսերի ներսորտային խաչաձևումն  
ամենից շատ կիրառվել ե ցորենի նկատ-  
մամբ: Տասնյակ հազարավոր կոլտնտեսու-  
թյուններ մեր լայնածավալ յերկրի տարբեր  
շրջաններում կատարել են ցորենի ներսոր-  
տային խաչաձևում: Սկսած 1936 թվից,  
տարեցտարի աճում և այն կոլտնտեսու-  
թյունների թիվը, վորոնք կիրառում են  
ցորենի սորտերի բարելավման այդ միջոցը:  
Որինակ՝ Հայաստանում, 1938 թվին, ցորենի

Ներսորտային խաչաձեռւմ են կատարել 50  
կոլտնտեսություն, իսկ 1939 թվին պետք է  
կատարեն 400 կոլտնտեսություն։ Ահա թե  
ինչքան արագ և աճում այն կոլտնտեսու-  
թյունների թիվը, վորոնք սկսում են ոգ-  
տագործել ներսորտային խաչաձեռւմը։

Իսկ ինչպես կատարել ցորենի ներսոր-  
տային խաչաձեռւմը։ Այս հարցն են տալիս  
մեզ մեր այն բոլոր կոլտնտեսությունները,  
վորոնք ուղղում են ոգտագործել բույսերի  
հատկությունները բարելավող այս միջոցը։  
Ահա այս հարցի պարզաբանմանն ե նվիր-  
ված այս հրահանգը։

## Խ՞ՆՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ ԲՈՒՑՍԵՐԻ ՆԵՐՄՈՐ- ՏԱՅԻՆ ԽԱՉԱՁԵՎՈՒՄ

Ամենից առաջ անհրաժեշտ ե բացատրել,  
թե ինչ և նշանակում բույսերի ներսոր-  
տային խաչաձեռւմ։

Բնության մեջ գոյություն ունեցող  
բույսերի մեծամասնությունը, այդ թվում  
պաղպատնտեսության մեջ մշակվող բոլոր

բույսերը, իսկ գյուղատնտեսական բույսերի թվում նաև ցորենը բազմանում են սեռական ճանապարհով։ Բույսերն ել կենդանիների նման ունեն արական և իգական սեռական որդաններ, վորոնք տեղավորված են նրանց ծաղիկների մեջ։

Բույսերի իգական որդանը կոչվում է վարսանդ, իսկ արականը՝ առեջք։ Առեջքը յերբ վոր հասունանում ե, տալիս ե ծաղկափոշի, վորն ընկնում ե վարսանդի սպիր վրա և բեղմնավորում։ Այս բեղմնավորության հետևանքով բույսը պտուղ ե տալիս, վորը չի տա, յեթե բեղմնավորությունը չկատարվի։

Շատ բույսեր ունեն միայն այնպիսի ծաղիկներ, վորոնք բոլորն ել ունեն կամ միայն արական, կամ միայն իգական որդաններ (որինակ՝ այդպիսի բույս ե թթենին)։ Ուրեմն, այդպիսի բույսերը լինում են կամ իգական, կամ արական։

Իգական բույսը ծաղկափոշի յե ստանում արական բույսից և բեղմնավորվում։ Ահա

այսպիսի բեղմնավորությունը, յերբ վոր  
մի բույս ծաղկափոշի յե ստանում մի  
ուրիշ բույսից, կոչվում և խաչաձև բեղմնա-  
վորություն, իսկ բույսերն ել կոչվում են  
խաչաձև կերպով բեղմնավորվող բույսեր:

Շատ բույսեր ել կան, վորոնք իրենց  
վրա ունեն թե արական ծաղիկներ և թե  
իգական ծաղիկներ: Այդ ծաղիկների մեջ  
կան և ալնպիսիները, վորոնք ունեն միայն  
իգական որդաններ և այնպիսիները, վորոնք  
ունեն միայն արական որդաններ (որինակ՝  
յեղիպտացորենը): Իգական ծաղիկը ծաղկա-  
փոշի ստանալով արական ծաղկից, բեղմնա-  
վորվում եռ պտուղ տալիս: Հասկանալի  
յե, վոր այսպիսի բույսի իգական ծաղիկը  
կարող է ծաղկափոշի ստանալ կամ իր վրա-  
լի արական ծաղկից կամ մի ուրիշ բույսի  
արական ծաղկից: Այսպիսի բույսերն են  
կոչվում են խաչաձև կերպով բեղմնավորվող  
բույսեր:

Կան նաև բույսեր, վորոնց միևնույն  
ծաղկի մեջ տեղավորված են իգական և

արական որդանները միստին: Այդպիսի ՚ի  
բույս են նաև ցորենը: Այսպիսի բույսերի  
մոտ, հետեւապես նաև ցորենի մոտ, մի ծաղ-  
կի առեջքների ծաղկափոշին բեղմնավորում  
ենույն ծաղկի վարսանդը: Ահա այսպիսի  
բեղմնավորությունը կոչվում է ինքնաբեղմ-  
նավորություն, իսկ բույսն ել կոչվում է  
ինքնաբեղմնավորվող բույս:

Աղխարահոչակ գիտնականներ Դարվինը,  
Միջուրինը, Լիսենկոն պարզել են, վոր այն  
բույսերը, վորոնք բեղմնավորվում են խա-  
չաձև կերպով, ավելի լավ են հարմարվում  
արտաքին պայմաններին, որինակ՝ ցըտին,  
յերաշտին, հիվանդություններին, ավելի  
փարթամ են լինում և բերքատու: Իսկ այն  
բույսերը, վորոնք ինքնաբեղմնավորվում են,  
ավելի վատ են հարմարվում արտաքին պայ-  
մաններին, նվազ են լինում և պակաս ըեր-  
քատու: Մի խոսքով՝ խաչաձև բեղմնավո-  
րությունն ոգտակար ե բույսերի համար,  
իսկ յերկարատև ինքնաբեղմնավորությունը՝ մխասակար:

Յեթե խաչաձև բեղմնավորությունն ոգուտակար ե բույսի համար, ապա այստեղից ել հարց ե ծագում, թե արդյոք չի՞ կարելի այնպես անել, վոր ինքնաբեղմնավորվող բույսը, որինակ՝ ցորենը, բեղմնավորվի խաչաձև կերպով։ Կարելի յեւ սրա համար պետք ե բույսը յենթարկել կաստրացիայի, ոյսինքն նրա ծաղիկների միջից պետք ե հեռացնել իր արական որգանները՝ առեջքները և թողնել միայն վարսանդը։ Այս դեպքում ուրիշ բույսի ծաղկափոշին քամու միջոցով կընկնի կաստրացիա արած ծաղկի վարսանդի առեջքի վրա և կընդմնավորի նըրան։ Ահա այսպիսի բեղմնավորությունը կոչվում է ներսորտային խաչաձևում։

Ի՞նչ ե ՊԱՀԱՆՁՎՈՒՄ ՑՈՐԵՆԻ ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ԽԱՉԱՁԵՎՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նախ և առաջ պետք ե մեծ խնամքով ընտրել այն ցանքը, վորտեղ պետք ե կատարվի խաչաձևումը։ Ցանքը պետք ե լինի բարձր բերքատու և զտասորտ։ Ամենա-

կարնորը ցանքի բարձր բերքատվությունն է, իսկ յեթե զտասորտությունը 100 °օ-ի չե հասնում, այլ դրանից ցածը ե, վոչինչ, կարելի յե խաչաձևումն անց կացնել նաև այդպիսի ցանքերում:

Խաչաձևման համար պետք ե ընտրել ամենափարթամ, ամենառուժեղ բույսերը, իսկ բույսերի միջից ել՝ ամենափարթամ, ամենառուժեղ հասկերը:

Խաչաձևման համար բույսեր պետք ե ընտրել ցանքի խորքում, ցանքի ափից գեպի ներս, 15 մետրից վոչ պակաս:

Եթե ներսորտային խաչաձևման համար վերցրած ցանքը զտասորտ ե ու նրա կողքին կա մի ուրիշ սորտի ցանք, այդ դեպքում խաչաձևման բույսերը պետք ե ընտրել այնպիսի տեղում, վոր հարեան ցանքից հեռու լինի վոչ պակաս, քան 100 մետր:

Ցանքի, սորտի ու բույսերի ընտրությունն այս ձևով կատարելուց հետո կարելի յե անց կացնել ներսորտային խաչաձեվումը, այսինքն՝ կաստբացիայի լենթար-

կել հասկերը, վորպիսզի նրանք ծաղկափոշի  
ստանան հարևան բույսերից:

ՅԵՐԲ ՅԵՎ, Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ ՑՈՐԵՆԻ  
ՀԱՍԿԵՐԻ ԿԱՍՏՐԱՑԻԱՆ

Յորենի կաստրացիան պետք է սկսել բույ-  
սերի հասկակալման ժամանակ, յերբ վոր  
հասկերի ծայրերն սկսում են յերեալ, և  
վերջացնել մինչև ցանքի մասսայական ծաղ-  
կումը:

Նկատի պետք ե տռնել, վոր ցորենի  
հասկակալումից մինչև մասսայական ծաղ-  
կումը կարճ ե տեսում. աշնանացան ցորենինը  
տեսում ե 3—8 որ, իսկ գարնանացանինը՝  
2—3 որ։ Ուրեմն, պետք ե զգույշ լինել, վոր  
այս ժամանակը չանցնի։


Եեթե կաստրացիայի ժամանակ հասկը  
դեռ լրիվ դուրս չի յեկել տերեաբնից, այդ  
դեպքում պետք ե այն (հասկը) հանել տե-  
րեաբնից և տերեաբունն զգույշ կերպով ծա-  
լել (նկ. № 1):

Այն հասկերը, վորոնք դեռևս դուրս չեն

Նկ. № 2. Չինցիան.




Նկ. № 2. Չինցիանը ծալիկ ու գեղակի նույզի, պոկիկի ու հասկի չի տքի և  
ծալիկի ճառակները, հասացիկների կամ հասկի կամ դաշտի վայրին  
Աւբեմ, հասկը պատրաստ է լաստըստայի համար:



յեկել տերևաբներից, միշտ ունենում են կանաչ առեջքներ և այդպիսի հասկերը կարելի յե առանց ստուգելու կաստրացիայի յենթարկելու հսկ այն հասկերը, վորոնք արդեն դուրս են յեկել տերևաբներից, պետք և ստուգվեն, վորպեսզի պարզվի, թե արդյոք նրանց առեջքները կանաչ են, թե դեղին: Յեթե առեջքները դեղին են, այդ նշանակում ե, վոր նրանք հասունացել են և այդպիսի հասկերը կաստրացիայի չպետք և յենթարկելու կաստրացիայի պետք և յենթարկել այնպիսի հասկերը, վորոնց առեջքները դեռևս կանաչ են:

Հասկը կաստրացիա անելուց առաջ պետք ե կտրել ու հեռացնել նրա հիմքի և ծայրի 2—3 հասկիկները (նկ. № 1), վորոնք զարդացած չեն և նվազ են: Պետք ե կտրել ու հեռացնել նաև հասկիկների միջին ծաղիկները և թողնել միայն աջ ու ձախ կողմի դրսի ծաղիկները, վորոնք լավ դարդացած են (նկ. № 3): Յեթե կաստրացիա կատարողը տեսնում է, վոր հասկի քիստերը խանդա-

Նկ. № 3. առ. հասկելի. բ. հասկեկ'ց հեռացվում են նրա միջնին ծաղկին եղանակ:



ըում են իրեն, ապա նա կարող ե կտրել  
նաև քիստերը:


Հասկն այս ձեռվ նախապատրաստելուց  
հետո կարելի յե կաստրացիան կատարել:

Կաստրացիան պետք ե կատարել մի գոր-  
ծիքով, վորը կոչվում ե պինցետ (նկ. № 2):  
Պինցետով պետք ե պոկել նաև հասկի ծայ-  
րի ու հիմքի թույլ հասկիկներն ու քիստերը:

Հասկը լավ կաստրացիա անելու համար  
պետք ե լավ բռնել թէ պինցետը և թէ հաս-  
կը (կաստրացիայի ժամանակ հասկն ու  
պինցետը բռնելու ձեռ ցույց ե տրված № 4  
նկարում): Հատկապես լավ պետք ե բռնել  
հասկը. պետք ե այնպես անել վոր հասկը  
չտրորվի, չջարդվի, Դրա համար հասկը չը-  
պետք ե սեղմել մատներով, այլ պիտի բըռ-  
նել շատ թույլ կերպով:

Ցորենի հասկի կաստրացիայի համար,  
այսինքն՝ նրա ծաղիկների միջից առեջքները  
հեռացնելու համար, պինցետի ծայրերը պի-  
տի միացնել իրար և զդույց մտցնել ծաղկի  
թեփուկների արանքը: Պինցետը ծաղկի թե-

փուկների արանքը մտցնելուց հետո պետք  
ե զգույշ բաց անել նրա ծայրերը։ Շեշտում  
ենք, վոր պինցետի ծայրերն զգույշ պետք  
ե բաց անել։ Պինցետի ծայրերը շատ չպետք



Նկ. № 4. Պինցետը բռնելու ձևը՝ հասկը կաստրա-  
ցիայի յենթացկելու ժամանակ։

ՀԵԽՏՐՈՒՅԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ Հ Զ  
ԱԿԱԴԵՄԻԱ

Ե հեռացնել իրարից, շատ լայն չպետք ե  
բաց անել, վորովհետև պինցետը շատ բաց-  
վելով՝ կարող ե կոտրել ծաղկի թեփուկները։  
Իսկ ծաղկի թեփուկները չպիտի կոտրել,  
չպիտի ծածկել ու քրքրել. սրա հետեանքով  
ծաղիկը, հասկիկը կամ ամբողջ հասկը կչո-  
րանան, և հատիկ չի ստացվի։

Պինցետի ծայրերը բացվելով, բացում են  
ծաղկի թեփուկները, վորի շնորհիվ կաս-  
տրատորը կարող ե տեսնել առեջքները։  
Առեջքների ծայրերը տեսնելով, կաստրա-  
ցիա անողը պինցետի ծալրերով պետք է  
բռնի նըանց վերեկի մասից ու դուրս քաշի։  
Պետք ե ասել, վոր առեջքները կպած են  
ծաղկին շատ նուրբ ու բարակ թելիկներով  
և հեշտությամբ պոկվում են։

Կաստրացիա անողը պետք է իմանա,  
վոր յուրաքանչյուր ծաղկի մեջ կա 3 հատ  
առեջք։ Ուրեմն, կաստրացիայի ժամանակ  
պետք ե ամեն անգամ ստուգել առեջքների  
թիվը և տեսնել՝ արդյո՞ք 3 հատ առեջք ե

հանվել, թե՝ պակաս և յեթե պակաս ե հանվել, ապա պետք ե հանել նաև մնացածը:

Առեջքները ծաղկից հանելու ժամանակ նրանց ծայրերը չպետք ե սղմել պինցետով. առեջքները շատ նուրբ են և պինցետի ծայրերը պինդ սղմելու դեպքում կտրվում են, վորի հետևանքով կաստրացիա անողը փխանակ ամբողջական առեջքները հանելու, հանում ե նրանց կտորները: Ուրեմն, կաստրացիայի ժամանակ պետք ե հետևել, վոր հանվի Յ. Հատ ամբողջական առեջք: Ծաղկի մեջ առեջքների կտորներ չպետք ե թողնել:

Կաստրացիա արած հասկերի ցողունները չպետք ե կոտրել: Իսկ ցողունը կոտրելու պատճառը շատ հաճախ այն ելինում, վոր կաստրացիա անողը շատ մոտ ե նստում այն բույսին, վորն ընտրել ե կաստրացիա անելու համար: Կաստրացիա անողը պետք ե մի քիչ հեռու նստի բույսից և բույսն զգույշ թեքի դեպի իրեն:

Կաստրացիա արած հասկը պետք ե նշանակել. դրա համար ցողունին, անմիջապես

հասկի տակը, պետք ե կապել գունավոր թել  
կտմ գունավոր շորի կտոր (ամենահարմարը  
վառ կարմիր դույնն ե), Այս ձեռվ նշան  
անելը հեշտացնում ե հասկերի հավաքելը  
բերքահավաքի ժամանակ։ Առանց նշան ա-  
նելու, կաստրացիա արած հասկերը հասած  
արտում չափազանց դժվարությամբ են յե-  
րեվում և նրանց հավաքելը համարյա ան-  
հնարին ե լինում։

Ի՞ՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՅՈՐԵՆԻ ՀԱՍ-  
ԿԵՐԻ ԿԱՍՏՐԱՑԻՌ.ՑԻ ՍՇԽԱՏՈՆՔՆԵՐԸ

Ճորենի ներսորտային խաչաձեռնը հա-  
ջող կերպով կատարելու համար չափազանց  
մեծ նշանակություն ունի աշխատանքի  
կազմակերպումը։ Յուրաքանչյուր կոլտըն-  
տեսօւթյան վարչություն, վորը մտադիր ե  
ներսորտային խաչաձեռն կատարել, պետք  
ե առանձին ուշադրություն դարձնի աշխա-  
տանքը կազմակերպելու վրա։

Ամենից առաջ, կոլտնտեսությունը պետք  
ե ունենա կաստրացիա կատարելը շատ

լավ իմացող 2—3 մարդ։ Սրա համար, այս սինքն՝ կաստրացիա կատարելը սովորելու համար, կոլտնտեսության վարչությունը պետք է մարդիկ ուղարկի կամ կուրսեր, կամ շրջանի գյուղատնտեսի մոտ, կամ այն հարեվան կոլտնտեսությունը, վորտեղ զիտեն կաստրացիա անելը։ Այսպիսով, կոլտնտեսությունը կունենա կաստրացիայի գործը լավ իմացող 2—3 հոգի՝ կաստրացիայի հրահանգիչներ։

Այս հրահանգիչները կոլտնտեսության անդամներից 12—15 հոգու պետք է սովորեցնեն կաստրացիա կատարելը և միաժամանակ դեկավարեն կաստրացիայի աշխատանքները։ Սրա համար, հրահանգիչները կոլտնտեսության վարչության կողմից նշանակված 12—15 հոգուն պետք է տանեն այն ցանքը, վոր նախատեսված է ներսորտային խաչաձևման համար և սովորեցնեն թե ինչպես պետք է կատարել կաստրացիա։

Սովորեցնելու ժամանակ հրահանգիչներից ամեն մեկն իր շուրջը պետք է հավաքի

6—7 հոգի և գործնական կերպով նրանց ցույց տա կաստրացիա անելու ձևը։ Սրանից հետո կաստրացիա սովորողները պետք ե վարժվեն, մինչև վոր սովորեն հմուտ կերպով կաստրացիա անելը։

Վարժվելու համար կաստրացիա արած հասկերը հաշվի չպետք ե առնել։

Յերբ կաստրացիա սովորողներն արդեն սովորել են ու վարժվել, հրահանգիչները պետք ե նրանց համարեն կաստրատորներ, այսինքն՝ մարդիկ, վորոնք դիտեն կաստրացիա անելը և պետք ե հաշվի առնեն նրանց կաստրացիա արած հասկերը։ Սրա համար հրահանգիչները պետք ե կաստրատորներին տան գունավոր թել կամ գունավոր կտոր և թույլ տան, վոր նրանք այս թելով կամ կտորով կապեն ու նշանակեն իրենց կաստրացիա արած հասկերը։

Հրահանգիչներն ամեն որվա աշխատանքի վերջում պետք ե ստուգեն կաստրատորների աշխատանքի վորակը և հաշվի առնեն, թե նրանցից ամեն մեկն ընդամենը քանի

հասկ ե կաստրացիա արել ու արդյունքները  
գրանցեն հատուկ տետրի մեջ։ Միաժամա-  
նակ հաշվի պետք ե առնել հասկերի կաս-  
տրացիայի վորակը։

Կաստրացիայի հաշվառման տետրի մեջ  
ամեն մի կաստրատորի պետք ե հատկա-  
ցնել մի առանձին յերես, վորտեղ պետք ե  
գրել կաստրատորի անունն ու ազգանունը,  
ամսաթիվը, ցորենի սորտի անունը, կաս-  
տրացիա արած հասկերի թիվը և աշխա-  
տանքի վորակը։ Աշխատանքի վորակը պետք  
ե նշանակել լավ, միջակ կամ գերազանց։

Կաստրատորի աշխատի հարցը պետք ե  
պարզի կոլտնտեսության վարչությունը։  
Պետք ե նկատի առնել, վոր վորպես մի  
աշխատի նորմա կարելի յե ընդունել 80 հատ  
լավ կամ գերազանց վորակով կաստրացիա  
արած հասկը։ Միջակ վորակի կաստրացիայի  
ժամանակ մի աշխատ կարելի յե հաշվել 100  
հասկը։ Վատ վորակով կաստրացիա արած  
հասկերը չպետք ե ընդունել։

Պետք ե ասել, վոր կաստրացիա կատա-

լրելը դժվար աշխատանք չե, և ամեն մի կոլտնտեսական հեղտությամբ ու վորակով կարող ե կատարել իր նորման, այսինքն՝ որական 80-ից մինչև 100 հասկ։

Յեթե կոլտնտեսությունն ունենա 12—15 կաստրատորներ, ապա նրանք մի որում կարող են կաստրացիայի յենթարկել 1000-ից մինչև 1400 հասկ։ Հինգ որ կաստրացիա կատարելու դեպքում կոլտնտեսությունը կարող է ունենալ 5000-ից մինչև 7000 հասկ. յեթե հաշվինք, վոր յուրաքանչյուր հասկից կարելի յե ստանալ մոտավորապես 15 հատիկ, ապա այս նշանակում ե, վոր կոլտընտեսությունը կունենա 75,000-ից մինչև 105,000 հատիկ։ 30,000 հատիկի քաշը կազմում է մոտավորապես 1 կիլոգրամ, հետեապես, կոլտնտեսության ունեցած 75,000-ից մինչև 105,000 հատիկի քաշը կլինի 2,5-ից մինչև 3,5 կիլոգրամ։

Այս քանակությամբ սերմացուն անհրաժեշտ ձեռվ բազմացնելու դեպքում, կոլտնտեսությունը կարող է 3 տարվա ընթացքում ունենալ այնքան սերմացու, վոր բավարարի նրա բոլոր դաշտերը ցանելու համար։

ՅԵՒՐԲ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ՀԱՎԱՔԻԼ ԿՈՒ-  
ՏՐԾՑԻՌ ԱՐԱՇ ՀԱՍԿԵՐԸ

Կաստրացիա արած հասկերը պետք և  
հավաքել բերքհավաքից մեկ կամ յերկու  
որ առաջ:

Կաստրացիա արած հասկերը պետք և հա-  
հավաքել յերկար ցողուններով, վորպեսզի  
հնարավոր լինի տվյալ ցանքի, ապա նաև  
տվյալ սորտի բոլոր հասկերը միացնել և  
խուրձ կապեր

Այս խըճին պետք և կապել ետիկետ,  
վորի վրա նշանակված պետք և լինի հե-  
տեվյալը՝

1) Շրջան

2) Գյուղ

3) Կոլտնեառության

4) Ցորենի սորտի անունը

5) Ցանքի մի հեկտարի բերքատվությունը

6) ՆՍԽ

Ետիկետը պետք և լրացնի խըճիթ-լա-  
բորատորիայի վարիչը կամ բրիգադիրը:

Ետիկետը չպետք և կորցնել, այլ պետք

Ա միշտ պահել վորպիս վկայական՝ ներւ  
սորտային խաչաձեռւմից ստացված սերմա-  
ցույի համար:

Այս ետիկետի բոլոր կետերը պարզ են,  
բացի 6-րդ կետից: 6-րդ կետում գրված ե  
ՆՍԽ. սա նշանակում ե՝ ներսորտային խա-  
չաձեռւմ: Իսկ ի՞նչ պետք ե գրել սրա դիմաց,  
յերբ ետիկետը կապվում ե կաստրացիա  
արած հասկերին կամ նրանցից ստացած  
հատիկներին, այս հարցի դիմաց պետք ե  
գրել Օ (զերո):

Ուրեմն, կլինի՝ ՆՍԽ—0:

Յերբ ետիկետը կապվում ե ՆՍԽ—0-ի  
ցանելուց հետո ստացված բույսերին կամ  
հատիկներին, այս հարցի դիմաց պետք ե  
գրել 1. ուրեմն, կլինի՝ ՆՍԽ—1:

Յերբ ետիկետը կապվում ե ՆՍԽ—1-ի  
ցանելուց հետո ստացված բույսերին կամ հա-  
տիկներին, այս հարցի դիմաց պետք ե գրել  
2, ուրեմն, կլինի՝ ՆՍԽ—2: Յեկայսպես շա-  
բունակ՝ ՆՍԽ—3, ՆՍԽ—4, ՆՍԽ—5 և այլն:

Այս թվերը ցույց են տալիս, թե քանի

տարի յե ցանվում տվյալ կոլտնտեսության  
մեջ ներսորտային խաչաձևումից ստացված  
սերմացուն. յեթե, որինակ՝ ետիկետի վրա  
գրված ե ՆՍԽ—4, ապա ուրեմն այդ կոլ-  
տնտեսության մեջ չորս տարի յե, վոր  
ցանվում ե ներսորտային խաչաձևումից  
ստացված սերմացուն:

### Ի՞՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱԼՍԵԼ ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ԽՈԶԱՉԵՎԱԾ ՀԱԹԿՆԲԸ

Ներսորտային խաչաձևած հասկերը  
պետք ե կալսել այնպես, վոր տարբեր սոր-  
տերի ցորենները չխառնվեն միմյանց։ Մը ա-  
համար, խուրձը փշրելուց առաջ պետք ե  
ստուգել, թե արդյոք մեջը ցոքենի ուրիշ սոր-  
տի խառնուրդ չկամ։ Որինակ՝ յեթե տվյալ  
ցորենը «Դրեկում» ե, պետք ե ստուգել, թե  
արդյոք մեջը «Դելֆի»-ի, «Ռուբրիցեպս»-ի  
կամ մի վորեն այլ ցորենի հասկեր չկան։  
Յեթե կան, ապա պետք ե այդպիսիներն  
առանձնացնել:

Ներսորտային խաչաձևած հասկերի, այ-

սի՞նքն՝ կաստրացիա արած հասկերի մի  
խուրձը կալսելուց հետո պետք է մաքրել  
աշխատանքի տեղը, հեռացնել նախորդ  
խուրձից թափված հատիկները և ապա  
սկսել նոր խուրձի կալսելը:

Պետք է զգույշ լինել, վոր ՆՍԽ—Օ.ի  
հատիկները չվարակվեն քարամրիկով:

Ի՞՞նՉ ԶԵՎՈՎ 8ԱՆԵԼ ՆՍԽ—Օ ՍԵՐՄՍՅՈՒՆ

ՆՍԽ—Օ սերմացուն պետք է ցանել  
այնպիսի ձեռվ, վոր ամենամեծ չափերով ա-  
պահովվի նրա արագ բազմացումը: Ողեսայի՛  
Սելեկցիայի և գենետիկայի ինստիտուտը  
մեզ տվել է ցորենի սերմացույի արագ բազ-  
մացնելու ձեռն: Դա լայնաշարք ցանք անելն  
է: Ուրեմն, ՆՍԽ—Օ սերմացուն պետք է  
ցանել լայնաշարք ձեռվ:

Լայնաշարք ցանքի ժամանակ սերմա-  
ցույի հատիկը պետք է ցանել հատ-հատ, ձեռ-  
քով, ուղիղ, կանոնավոր շարքերով: Շարքի  
հեռավորությունը շարքից պետք է լինի 25  
սանտիմետր և հատիկի հեռավորությունը հա-  
տիկից՝ 20 սանտիմետր:

Այսպիսի ցանք անելու համար պետք է  
պատրաստել ջրելու համար հարմար մարգեր,  
իսկ այս մարգերի մեջ, նրանց յերկարու-  
թյամբ, պետք է քաշել փոքրիկ ակոսներ։  
Հասկանալի յե, վոր այս ակոսները միմյան-  
ցից պետք է հեռու լինեն 25 սանտիմետր։  
Շատ հարմար է մարդն այնպես պատրաս-  
տել, վոր նրա մեջ տեղավորվի 4-ից 5 շարք  
(այս 4—5 շարքից 2-ը՝ թմբերի մոտ,  
2—3-ը՝ ներսում):

Ակոսների խորությունը պետք է լի-  
նի 4—5 սանտիմետր։

Թմբերի մեջ փոքրիկ ակոսներ քաշե-  
լու համար կարելի յե գործածել 1—1,5 մետր  
յերկարություն ունեցող սրածայր փայտեր։

Փոքրիկ ակոսները քաշելուց հետո, մար-  
զերը պետք է բաժանել ցանողների մեջ և  
ցանել։ Յուրաքանչյուր ցանող պետք է  
ցորենի հատիկները հողը գցի և ծածկի։  
Կարելի յե նաև գործն այնպես կազմակեր-  
պել, վոր մի քանի աշխատող ցանեն, մի  
քանիսն ել ծածկեն։

Ցանողները պետք է վարժվեն հատիկը

հատ-հաս հողը գցելուն և հատիկների մեջ, աչքաչափով 20 սանտիմետր տարածություն պահպան:

Ներսորտային խաչաձեռմից ստացված սերմացույի (այսինքն ՆՍԽ-ի) ցանքը պետք է մշակել ամենամեծ խնամքով։ Սերմացուն պետք է ցանել սև ցելում։ Պետք է հողը լավ հերկել, պարարտացնել, փխրացնել, ջրել և թույլ չտալ, վոր դաշտում մոլախոտեր լինեն։

Այս ցանքի միջից պետք է հեռացնել ուրիշ սորտի ցորենի բույսերը։ Որինակ՝ յեթե ցանքը «Գրեկում»-ի յեւ և մեջը կան «Դելֆի»-ի, «Ռուբրիցեպս»-ի կամ այլ ցորենների բույսեր, ապա դրանք պետք է հավաքել առանձին և առանձին ել ցանել։

Առանձին ուշադրություն պետք է դարձնել, վոր այս ցանքի մեջ քարամրիկով կամ փոշեմրիկով վարակված հասկեր չլինեն, իսկ յեթե լինեն, պետք է քաղել նըանք և այրել։ Յեթե կասկած կա, վոր ՆՍԽ-1 սերմացուն վարակված է մրիկով, ապա պետք է ախտահանել համապատասխան ձևով։

Պատ. Խմբագիր՝ Գ. Բարտօնյան  
Տեխ. Խմբագիր՝ Վ. Մանուկյան  
Կոնսըռոլ Արքագիրիչ՝ Ռ. Տոնյան

Հանձնված և արտադրության 3/III 1939 թ,  
Ստորագրված և տպագրության 4/V 1939 թ.  
Դլակ. Միազոր՝ Ն-2835 Պատվ. № 112 ակրաժ  
4.000, թղթի չտփալ  $62 \times 84^1/64$

ԳԻՆԸ 00 Կ.

Գետհրատի Ա տպարտն, Եկեղեցն, Նալբանդյան 5

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040317

[0643]

A 1  
4625